Սիպիլ

Ժանյակները

«Շատ նիհար է, շատ ալ տրժգույն», կ՚ըսեր,
Երբ փողոցեն կ՚անցներ երկայն մեկնոցով ,
Մեջքը սեղմված լարերուն մեջ քորսեին,
Աչքն ալ հովեն պատրսպարած ակնոցով:

Ծրփին մույնքը բարեկամ չեր սևերուն,
Մութ ըզգեստով անշուք աղջիկ մ՚էր խոնարհ,
Սև թավիշե օձիքն երկար կը գողնար:
Դեմքեն ցոլքեր, ուլեն թովքեր կը գողնար:

Իր քաղաքի արդուզարդովն ապերախտ
Գեղանի չէր բնավ այդ կինն աննըման,
Զոր դիտելով իսկ կ՚ըլլայինք բարեբախտ
Երբոր պարի սըրահին մեջ կուգար ման:

Ի՛նչ աղվոր էր օթյակին մեջ՝ երբ ճերմակ
Ժանյակով մը լոկ կը սքողեր իր թևեր,
Եվ ուսերուն, լանջքին վըրա անդիմակ՝
Բեհեզի մը թեթև ծալքը կը թևեր:

Մարած, հալած երանգներու մեջ պես-պես՝
Իր սեփական փայլը կ՚առներ դեմքն անոր,
Եթերային, անծի՛ր, աննյո՛ւթ ամպի պես

Միշտ անմատույց, անընջային և միշտ նոր:

Ժանյակներու այդ փրրփուրներ թափանցիկ,
Ծակտիկն անոնց, ցանցը բարակ օդային

Եվ մետաքսե ծրփանքն ալ թույլ ցոլացիկ
Բոլոր անձին դյութիչ բան մը կուտայն:

Ճառագայթ մը, լույս մը, ավյուն մը կյանքի
Մութ նայվածքին մեջ հրապույր մը կ՚արծարծեր,
Խորի՛ն անդունդ առանց ելքի ու հանգի,
Որուն գաղտնիքն ունի շանթերն ու կայծեր:

Եվ ժրպիտ մ՚ալ, չընքնաղ փրթթում մը վարդի
Կուգար բանալ շրրթուքներուն իր թերթեր
Ինչպես արևն իր ըզգեստովը զարդի,
Որուն առջև կը բացվին այգն ու եթեր:

Եվ կը բացվեր սիրտն երազի մը հեշտին
Այդ ժանյակե մրթնոլորտին մեջ տարտամ,
Ջերմ, կրմայող զարկ մը տալով իր շեշտին,
Ջոր կը պաշտեր քերթողն ու ջոջն ալ փարթամ:

Բայց ամենուն համար սիրտն էր հեշտին
Լոկ կը սիրեր պերճ ժանյակներն անապակ,
Որոնց հրմայքն անձրևի պես կը թափեր
Այնքան խունկեր, այնքան վարդեր ոտքին տակ:

Կը փայփայեր զանոնք տենչով կաթոգին
Կյանքը դրրած անոնց վրրա հոլանի,
Կրրքոտ սեր մը, ուր կար հանճարն ու հոգին,
Ինչպես գիտեն սիրել կանայք խելանի:

Սև առտու մը սակայն հաղով մ՚արթնացավ
Իր ժանյակե լայն բարձերուն կըռթընած,
Մեջքին վրրա, կողքին վրրա կ՚զգար ցավ,
Ու կը հևար հոգնած, դեղնած, քըրտնած:

Թատրոնին մեջ ցուրտ էր առեր, կը հիշեր,
Երբ օթյակին դուռը բացվեր էր ետին.